ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 88 -Ա ք.Արտաշատ

«21» մարտի 2025թ.

ՍԱՐԳԻՍ ՄԻՍԱԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ «ՀԱՅԱՆԻՍՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 85-րդ կետով, հիմք ընդունելով 2025 թվականի մարտի 20-ի Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Հայանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի թիվ 3 որոշումը և Սարգիս Միսակի Հայրապետյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սարգիս Միսակի Հայրապետյանին 2025 թվականի մարտի 21-ից ազատել «Հայանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պարտականություններից և լուծել նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. 2025 թվականի մարտի 21-ից Սարգիս Միսակի Հայրապետյանին նշանակել Հայաստանի

Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Հայանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս" ԹԵՎՈՆՅԱՆ**